

ՈՌՄԻՆԻԱ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1994թ. նոյեմբերի 22-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Ռումինիայի առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- տեղեկությունների, փորձի, մասնագետների փոխանակություններ, մասնակցություն միմյանց գիտական միջոցառումներին:
- ուղղակի համագործակցություն գիտական հաստոտությունների և հիվանդանոցների միջև,
- տեղեկությունների, առողջապահական, վիճակագրական տվյալների, համաճարակաբանական հաշվետվությունների փոխանակություն,
- միմյանց պաշտոնական պատվիրակություններին, ներառյալ դիվանագիտական ու հյուպատոսական ոլորտի աշխատակիցներին անվճար բուժօգնության (թերապևտիկ և անհետաձգելի վիրաբուժական) տրամադրում,
- թերապևտիկ և անհետաձգելի վիրաբուժական օգնություն երկու երկրների զբոսաշրջիկներին՝ հյուրընկալող երկրի քաղաքացիների համար գործող կարգի համապատասխան,
- անվճար բուժօգնություն իր երկրի տարածքում գտնվող մյուս երկրի քաղաքացուն՝ մեծ համաճարակային նշանակության ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում: